

Վ Ե Ի Ղ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Մ

“Revue des Études Arméniennes”, Հանդիսիմ

«Հանդէս Հայագիտական Ուսումնասիրութիւններու» “Revue des Études Arméniennes», պարբերութեամբ, հիմնուած 1920 ին Ա. Մէյէի և Ֆ. Մազլերի ձեռքով. գաղթեցաւ հրատարակութիւնը 1933, թողլով պարագ մը, զոր ոչ մէկ այլ հրատարակութիւն յաջողեցաւ լինելու:

Հաճոյքով կը տեղեկացնենք թէ, Գալուստ Կիւլպէնկեանի Հիմնարկութեան աւստաններն աջակցութեան շնորհիւ, «Հայագիտական Ուսումնասիրութիւններու Հանդէս»ը պիտի վերածնի նոր ձևի մը տակ և նիւթական պայմաններու մէջ, որոնք կ'ապահովեն կանոնաւոր հրատարակութիւն մը բազմաթիւ տարիներու համար:

«Հանդէս»ը պիտի ունենայ խմբագրական մարմին մը, ուր ներկայացուած են հայագիտութեան զանազան մարզերը, ինչպէս և զանազան մշակոյթներ, որոնցմով հիւսուած է Հայաստանի պատմութիւնը: Խմբագրական Մարմինին կ'անդամակցին Պ. Պ. Ե. Պենվենիսթ, Կ. Գահէն, Մ. Գանարա, Ք. Տիւմէզիէ, Ա. Տիւրան-Սամմէր, Ֆ. Ֆէյրի, Ա. Կրայար, Պ. Լըմիլ, Շ. Մերսիէ, Ա. Միրամպէլ, Լ. Րոպէր:

Խմբագրութեան քարտուղարն է Պր. Հայկ Պէրպէրեան, 10, Bd. Delessert, Paris (16°).

Կ'առաջագրենք 1963 ին հրատարակել «Հայագիտական Ուսումնասիրութիւններու» նոր շարքին առաջին հատորը:

«Հանդէս»ը, լայնօրէն արամադրելի է բոլոր երկիրներու գիտնականներուն, պիտի հրատարակէ գիտական յօդուածներ, ուսումնական լուսնի ճիւղերու վերաբերեալ, լեզուագիտութիւն և բանասիրութիւն, պատմութիւն և հնագիտութիւն, ընկերաբանութիւն և ազգագրութիւն, ամենէն տարածուն և միեւնոյն տառն ամենէն հասկնալի հետապատկերի մը մէջ, ընդգրկելով յարաբերութիւնները հայկական մշակոյթին՝ դրացի երկիրներուն հետ:

Լայն տեղ պիտի արուի Հայաստանի մէջ կատարուած աշխատանքներու թարգմանութեան, որոնք, այլպէս, անմատչելի կը մնան Արեւմուտքի բազմաթիւ գիտնականներու: Զանազան ուսմանց զարգացման մասին ընդհանուր տեղեկանքներ, զբախտական ցուցակներ և ժամանակագրութիւններ պիտի աւելնան յօդուածներուն և ինքնագիր ժանթագրութիւններու վրայ, որոնք կրնան ընդգրկել քարտէս և նկար:

Ուրիշ պիտի ըլլանք ունենալով Ձեր ալ աջակցութիւնը, խնդրելով նոյնպէս որ ներկայ յայտարարութիւնը յանձնէք Ձեր ընթերցողներու գիտութեան:

Խմբագրական Մարմինի կողմէ

Տնօրէն

Ե. ՊԵՆՎԵՆԻՍԿ

Փարիզ, Հոկտեմբեր 1962